ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Բաղրամյան համայնք, գ.Բաղրամյան,Արտաշատյան
Խճուղի 4, հեռ 023560074,077796060, էլ.փոստ
baghramyangyughapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 16 >> դեկտեմբերի 2011թվականի N 10-Ն

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը, ելնելով օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներից՝ Բաղրամյան համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Բաղրամյան համայնքի տարածքում 2012թ.-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության, (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա/Մինչև 300քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի տան, այդ թվում այգեգործական ամառանոցային տների, ինչպես նաև մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ:

Չնախատեսված օբյեկտների համար:

բա/201-ից մինչև 500քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 (տասնհինգ հազար)դրամ:

բբ/501-ից մինչև 1000քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000 (քսանհինգ հազար) դրամ:

բգ/1001 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 35000 (երեսունհինգ հազար)դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 (հազար հինգ հարյուր)դրամ:

դ/ 20 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի շնությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման , վերակառուցման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով.

ա/Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերի ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500(մեկ հազար հինգ հարյուր) դրամ;

բ/Բացի օբյեկտի վերակառուցման ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի օրենսդրությամբ սահմանված դրույքաչափի կիրառվում են նաև նոր շինարարության համար սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:

գ/Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերին ընդլայնող այլ կառույցների, (այդ թվում ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն (համաձայն սույն օրենքի), որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500(երկու հազար հինգ հարյուր)դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 2500(երկու հազար հինգ հարյուր) դրամ:

2/Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներոսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 2500(երկու հազար հինք հարյուր)դրամ:

5.Համայնքի տարածքում բացօթյա վաճառքի կազմակերպման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա/Գազի և վառելիքաքսայուղային նյութերի համար 150000(մեկ հարյուր հիսուն հազար)դրամ ընթացիկ տարվա համար;

բ/գյուղատնտեսական մթերքների համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝--350 /երեք հարյուր հիսուն դրամ/;

6.Համայնքի տարածքում առևտրի հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24 00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/Առևտրի օբյեկտների համար 25 000(քառանհինգ հազար) դրամ:

բ/Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50 000(հիսուն հազար)դրամ:

գ/Բաղնիքների, սաունաների համար 200 000(երկու հազար)դրամ:

դ/Խաղատների կազմակերպման համար 500 000(հինգ հարյուր) հազար դրամ:

ե/Շահումով խաղեր կազմակերպման համար 250 000(երկու հարյուր հիսուն հազար) դրամ:

զ/Վիճակախաղերի կազմակերպման համար 100 000(մեկ հարյուր հազար) դրամ:

7.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենել և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը սահմանվում է ընթացիկ տարվա համար 1000(մեկ հազար)դրամ:

8.Համայնքի տարածքում շինարարության, կամ շինության տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար ՏԻՄ-ի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 6000(վեց հազար) դրամ:

9.ՏԻՄ-երի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար ՏԻՄ-ի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000 (մեկ հազար) դրամ:

10.ՏԻՄ-երի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 1000 (մեկ հազար) դրամ:

Կողմ (5) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

ԵՐՎԱՆԴ ԳԱԼՍՏՅԱՆ

ՍՈՒԼԻԿՈ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ԱՐՄԵՆ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԱՇՈՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՍՈՒՐԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ